

Ոսկան վարդապետ, Մարսիլիոյ մէջ,
հակառակութիւն կը կրէ մանաւանդ հայոց
կողմէ: Զինք ամենէն աւելի կը տառա-
պեցնէ Թադէոս երէց Երեւանեցին, որուն
դէմ կը գանգատի իր կտակին մէջ, այս-
պէս. «Առ ամենայն հայազինս, յաւէտ առ
Հոգեւոր Հայրն իմ Տէր Յակոբ Սրբազան
կաթողիկոս... սակս դառնակսկիծ մահ-
ուան իմոյ, ի պատճառէ չարեացն չԹա-
դէոսի Երիցւոյ՝ անցուցելոցն ընդ իս և ընդ
գործարանիս իմոյ ի Մարշիլիայ քաղա-
քի... Թադէոս Համագտսպեան դամրոցս
և զղղեակս անօրէնութեան կերտեաց աստ,
բազմահնար մեքենայիւք... յաղագս բազ-
միցս արարեցեալ բնաւից բարեաց իմոց,
որ առ ինքն և առ իւրայինսն, յոգնա-
կերպ և զանազան փորձութիւնս հասոյց
ինձ և իմոցն... ծառայ գոլով՝ անխնա-
յաբար զգեալեալ փշրեաց զոսկերս իմ, հա-
տուցումն գթութեանց իմոց: Փրկեցեալն
ինեւ ի բանտից և ի կապանաց, կապեաց
և կնքեաց զգործարանս սրբոյ Էջմիածնի,
և գտունս իմ... մերկացուցեալ կողոպտեաց
զիս յընչից իմոց, և եմոյծ ի ներքոյ բազ-
մահոյլ պարտուց... այսպանեաց և անար-
գեաց զանունս և զփառս իմ և առաքչին
իմոյ Տեառն Յակոբայ ամենայն Հայոց
կաթողիկոսի...: Ուստի և իմ այսու ամե-
նայնիւ ընկղմեալ ի խորս անբուժելեաց
ցաւոց՝ հասի ի դրունս մահու. որ և յայնմ
ժամու մերձ աւանդման հոգւոյ իմոյ . . .